ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի գիտական
խորհրդի նիստում
2025 թ. մայիսի 14–ի, արձ. N 6

Գիտական խորհրդի նախագահ՝ Մ. Բ. Մակիչյան

ԿԱՐԳ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2025

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Հյուսիսային համալսարանի՝ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատության (այսուհետ՝ բուհի) և դասախոսների վերապատրաստման հետ կապված իրավահարաբերությունները:
2. Սույն կարգի մշակման իրավական հիմքերն են ՀՀ օրենսդրությունն ու Հյուսիսային համալսարանի կանոնադրությունը:
3. Դասախոսների վերապատրաստումը՝ նրանց մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների հետևողական կատարելագործման գործընթաց է:
4. Դասախոսների վերապատրաստման կազմակերպման գործընթացը համակարգում և վարում է բուհի «Գիտական հետազոտությունների և նորարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնը» (այսուհետ՝ կենտրոն)՝ «Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-26 թվականների ծրագրին» (այսուհետ՝ ծրագրին) համապատասխան:
5. Դասախոսների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են բուհի բյուջեի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:
6. Դասախոսների վերապատրաստման գործընթացի անմիջական պատասխանատուն բուհի ռեկտորն է:

II. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

7. Դասախոսների վերապատրաստման դասընթացներին (այսուհետ՝ դասընթացներին) դասախոսը մասնակցում է կամավոր :
8. Վերապատրաստման ենթակա են բուհի հիմնական աշխատակիցները:
9. Վերապատրաստման ենթակա չէ՝
   1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող դասախոսը,
   2) հղի և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող դասախոսը, եթե նա նման ցանկություն չի հայտնել:
10. Դասախոսների վերապատրաստման դասընթացների անցկացման և տևողության ժամկետները սահմանվում է ծրագրով:
11. Դասախոսների վերապատրաստման դասընթացի ծրագիրը մշակում է կենտրոնը, հաստատում է գիտական խորհուրդը:
12. Բուհի համապատասխան ամբիոնների վարիչները վերապատրաստումը սկսելուց առնվազն տասն օր առաջ դասախոսներին տեղեկացնում է վերապատրաստման ժամկետի և վայրի մասին:
13. Վերապատրաստման դասընթացի առնվազն երկու երրորդին մասնակցած դասախոսին, դասընթացի ավարտից հետո, տասն աշխատանքային օրվա ընթացքում տրվում է վկայական, համաձայն բուհի ռեկտորի հրամանի, որի պատճենը կցվում է դասախոսի անձնական գործին:
14. Դասախոսներին տրված վկայականը վավերական է միայն Հյուսիսային համալսարանում: